Հավելված 2
ՀՀ Տավուշի մարզպետի
" 15 " մարտի 2023 թ. թիվ 55 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի (այսուհետև՝ Աշխատակազմ) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) մարզպետի աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության Վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի (այսուհետև՝ Մարզպետ) որոշումներով, մարզպետի շխատակազմի գլխավոր քարտուղարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով:
3. Վարչության կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:
4. Վարչությունը վերակազմավորում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Վարչության գործունեության նպատակը առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության իրականացումն է ՀՀ Տավուշի մարզում հետևյալ ոլորտներում՝

1) մարդու և հանրության առողջության պահպանման, պետական նպատակային առողջապահական ծրագրերի իրականացման,

2) հանրային առողջության և բնակչության հակահամաճարակային և կարանտինային անվտանգության ապահովմանը մասնակցություն,

3) աշխատանքի և զբաղվածության.

4) սոցիալական աջակցության, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման, սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման,

5) ընտանիքի, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանության, իրավունքների ապահովման,

6) հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական պաշտպանության:

Վարչության խնդիրներն են.

1) առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներում պետական քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների մշակման աշխատանքներին աջակցելը և իրականացման ապահովումը:

2) առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառների պետական նպատակային ծրագրերի իրականացման ապահովումը հետևյալ ենթաբնագավառներում՝

ա. առողջապահության, բժշկական օգնության որակի և արդյունավետության բարձրացման.

բ. բնակչության զբաղվածության.

գ. սոցիալական աջակցության.

դ. երեխաների իրավունքների պաշտպանության.

ե. կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների.

զ. ընտանիքի իրավունքի պաշտպանություն, ընտանիքում բռնության կանխարգելում.

է. մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց աջակցության.

ը. բնակչության ծերացման հետևանքների հաղթահարման ու տարեցների սոցիալական պաշտպանության.

թ. հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ու ազատությունների իրականացման համար մատչելի պայմանների և հավասար հնարավորությունների.

ժ. սոցիալապես անապահով ընտանիքների բնակարանային ապահովության, այդ թվում՝ փախստականների,

ի. արտակարգ իրավիճակներում բնակչության բժշկական օգնության կազմակերպման ապահովումը:

3) առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրառման աշխատանքներին աջակցելը և իրականացման ապահովումը, մասնավորապես՝ տեղական մակարդակներում սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, առողջապահական, կրթաուսումնական կազմակերպությունների, ոստիկանության, սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ապահովումը:

Վարչության գործառույթներն են.

Վարչությունը մարզում իր նպատակի և խնդիրների կենսագործման նպատակով իրականացնում է հետևյալ գործառույթները:

1) ապահովում է առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներում պետական քաղաքականության իրականացումը և ծրագրերի կատարումը:

2) մասնակցում է առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության կառավարության պետական նպատակային ծրագրերի, օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակման և իրականացման աշխատանքներին:

3) առաջարկություններ է ներկայացնում առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառների հայեցակարգերի, ռազմավարության, օրենսդրության վերաբերյալ:

4) առաջարկություններ է ներկայացնում մարզի տարածքում գործող առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներում Նախարարությունների, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, Վարչության ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեության կազմակերպման, բարելավման նպատակով:

5) առաջարկություններ է ներկայացնում պետական նպատակային ծրագրերի շրջանակներում մարզային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների կողմից պետական պատվերի ձևավորման վերաբերյալ, հետևում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով ֆինանսավորմանը և բնականոն գործունեության ապահովմանը:

6) մարզի տարածքում առողջապահական պետական նպատակային ծրագրերի կատարումն ապահովելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններում բնակչության անվճար բուժօգնության ապահովումը, սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով հանձնաժողովային

ընթացակարգով առողջապահական ընկերություններում հիվանդանոցային բուժօգնության կազմակերպումը:

7) առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառներում տիրող իրավիճակի պարբերաբար վերլուծության իրականացումը, հրատապ լուծում պահանջող հարցերի բացահայտումը, մասնավորապես՝ մարզային ենթակայության առողջապահական բաժնետիրական ընկերությունների բնականոն գործունեության ապահովումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, նրանց ընտանիքների կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն և սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման ապահովում, անհրաժեշտության դեպքում խմբային (բազմամասնագիտական) քննարկումների կազմակերպում:

8) մարզի տարածքում գործող առողջապահական և սոցիալական պաշտպանության բնագավառների կազմակերպություններից, համայնքներից, ոստիկանությունից և այլ կառույցներից համապատասխան տեղեկատվության ընդունման, ամփոփման, վերլուծման և դրանք մարզպետին ու պետական այլ համապատասխան մարմիններին ներկայացնելու համար:

9) համակարգում է պետական պատվերի շրջանակներում իրականացվող դեղորայքի, բժշկական նշանակության ապրանքների և ծառայությունների գործընթացը, կենտրոնացված գնումների միջոցով ձեռք բերված և մարդասիրական օգնության ճանապարհով մարզին հատկացված դեղորայքի քանակի պատվիրակման, տեղափոխման, բաշխման, գործընթացի հաշվետվողականության ապահովում, սոցիալական ծրագրերի շրջանակներում մարդասիրական օգնությունների բաշխման աշխատանքների վերահսկում:

10) առաջարկություններ է ներկայացնում մարզային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների կադրային ներուժի բարելավման վերաբերյալ, աջակցում բարձրագույն, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական բժշկական կադրերի պատրաստման (վերապատրաստում, մասնագիտացում, վերամասնագիտացում), կատարելագործման, շարունակական մասնագիտական զարգացման վերաբերյալ, ինչպես նաև համակարգում է մարզի առողջապահական կազմակերպությունների մասնագիտական կադրային շտեմարանի աշխատանքները:

11) կազմակերպում է պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման չափորոշիչների, ուղեցույցների, կարգերի, առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման ու տնտեսավարման ժամանակակից մեխանիզմների, նորմատիվների, չափանիշների, չափորոշիչների տեղայնացումը մարզի տարածքում:

12) իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզում զորահավաքային նախապատրաստության միջոցառումների իրականացմանը, մասնավորապես՝ մարզում զորակոչային և նախազորակոչային աշխատանքների բժշկական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում, նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացի կազմակերպման իրականացում:

13) մարզում առողջապահական և սոցիալական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցային աշխատանքի ապահովում, մասնավորապես՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացի կազմակերպում, միջազգային և բարեգործական կազմակերպությունների կողմից սոցիալական աջակցության տարաբնույթ ծրագրերի համակարգում:

14) իրականացնում է առողջապահական համակարգի և բնակչության առողջության վիճակի մասին տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունն ու գնահատումը բնակչության առողջության պահպանման և առողջապահական, կրթական ծրագրերի մասին հանրային իրազեկման աշխատանքներ:

15) մարզի տարածքում բնակչության առողջության բարելավման և սոցիալական բնույթի միջոցառումների կազմակերպումը, ինչպես նաև մարզում կյանքի դժվարին իրավիճակում

գտնվող ընտանիքներին աջակցելը, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների իրավունքների պաշտպանության ապահովումը, նման իրավիճակում նրանց հայտնվելու կանխարգելումը:

16) աջակցում է ընտանիքում ապրելու և դաստիարակվելու երեխայի իրավունքի իրացմանը, կատարում երեխաների և կանանց առողջության իրավիճակային պարբերական վերլուծության, գնահատման աշխատանքներ:

17) ոչ պետական առողջապահական և բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների գործունեության՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ մշտադիտարկման ապահովումը:

18) մարզի տարածքում առողջապահական և սոցիալական հիմնահարցերի, պետական ծրագրերի կենսագործման, բնակչության միգրացիայի, զբաղվածության և սոցիալական պաշտպանվածության, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, փախստականների, կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների, ինչպես նաև երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող ծնողների, հակասոցիալական վարք դրսևորած և իրավախախտ անչափահասների համար այլընտրանքային (վերականգնողական) արդարադատության ծրագրերի մշակման և դրանց կատարման ապահովումը, հարցերի համալիր ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացումը և դրանց հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացումը.

19) արտակարգ իրավիճակներում մարզում բնակչության բժշկական օգնության կազմակերպումը:

20) մարզի տարածքում գործող առողջապահական կազմակերպությունների և սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների, անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպչական և մասնագիտական գործունեության ընթացիկ ուսումնասիրությունների ու վերլուծությունների կազմակերպումը և դրանց արդյունքների ամփոփման աշխատանքների իրականացումը:

21) աջակցում է մարզում բնակչության զբաղվածության պետական ծրագրերի իրականացմանը:

22) աջակցում է մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երեխաների, տարեցների, բռնության ենթարկված և օրենսդրությամբ սահմանված առանձին կատեգորիայի այլ անձանց սոցիալական պաշտպանությանը:

23) մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց, երեխաների, տարեցների, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և օրենսդրությամբ սահմանված առանձին կատեգորիայի անձանց հիմնախնդիրների ուսումնասիրության (վերլուծման) աշխատանքների իրականացմանը, առաջարկություններ ներկայացնում այդ անձանց սոցիալական պաշտպանության պետական ծրագրերի նախագծերի վերաբերյալ.

24) աջակցում է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանը:

25) երեխայի նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման և կանխարգելման նպատակով՝ համագործակցում է պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ, ըստ անհրաժեշտության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում ուղղորդում բռնության ենթարկված երեխային կամ դեպքը;

26) վարում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տեղեկատվական համակարգը, համագործակցում է նմանատիպ այլ համակարգեր սպասարկող կազմակերպությունների հետ:

27) իրականացնում է որդեգրման ենթակա երեխաների հաշվառումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, մարզում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից երեխայի որդեգրման գործընթացում իրականացնում է

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված լիազորությունները:

28) մարզում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնելու դեպքում իրականացնում է Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված լիազորությունները;

29) ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համատեղ քննարկում է մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած, ինչպես նաև հանցագործությունից տուժած երեխաների տեղավորման խնդիրները:

30) ձեռնարկում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության անհրաժեշտ միջոցներ, պաշտոնատար անձանցից և այլ քաղաքացիներից ստացված, երեխայի կյանքին և առողջությանը սպառնալու, նրա իրավունքների և շահերի խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքերում, աջակցում է ծնողական իրավունքների իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում առկա տարաձայնությունների կարգավորման գործընթացին՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը:

31) աջակցում է մարզում թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխաների պաշտպանության և կանխարգելման նպատակով իրականացվող ծրագրերին, ըստ անհրաժեշտության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում ուղղորդում թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխային կամ դեպքը:

32) իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հաշվառում, խնամքի տրամադրման վերաբերյալ կատարում ուսումնասիրություն և տրամադրում համապատասխան եզրակացություն, ինչպես նաև իրականացնում է օրենսդրությամբ ու սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

33) աջակցում է երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերմանը՝ դրանց բացակայության դեպքում:

34) աջակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ ուսումնական հաստատություններ ընդգրկվելու գործընթացին:

35) միջոցառումներ է ձեռնարկում մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման պետական քաղաքականության իրագործման ուղությամբ:

36) աջակցում է մարզում ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում բռնության կանխարգելման նպատակով իրականացվող ծրագրերին, ըստ անհրաժեշտության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում ուղղորդում ընտանիքում ընտանիքում բռնության ենթարկված անձին կամ դեպքը:

37) աջակցում է մարզում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը:

38) մասնակցում է մարզում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների (անձանց) սոցիալական գնահատման (սոցիալական կարիքների գնահատում) և սոցիալական աջակցության աշխատանքներին, ինչպես նաև գնահատված սոցիալական կարիքների վրա հիմնված սոցիալական աջակցության հասցեական ծրագրերի իրականացմանը:

39) համագործակցում է մարզում գործող Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ, մասնակցություն ունենում ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման աշխատանքներին;

40) համակարգում է մարզում որդեգրման, խնամատարության և երեխաների այլընտրանքային խնամքի ապահովման ընթացակարգերը, ուսումնասիրում և ապահովում է օրենսդրության միասնական կիրառությունը:

41) աջակցում է թրաֆիքինգի կամ շահագործման զոհերի, սեռական բռնության ենթարկված, ընտանիքում բռնության ենթարկված անձանց հիմնախնդիրների ուսումնասիրման (վերլուծման) աշխատանքներին:

42) ուսումնասիրում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերը, մշակում դրանց բարելավման ծրագրեր:

43) համագործակցում է մարզում առողջապահական, սոցիալական և իրավապաշտպան ծրագրեր իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ:

44) իրականացնում է հանրային իրազեկման աշխատանքներ;

45) մասնակցություն է ունենում մարզպետի, նրա Աշխատակազմի կողմից կազմակերպված քաղաքացիների ընդունելությանը, ինչպես նաև Աշխատակազմի գլխավոր քարտուղարի հանձնարարությամբ քաղաքացիների դիմումների և բողոքների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման և այլ մարմինների գրությունների քննարկմանը՝ լուծելով դրանց ընթացքը օրենսդրությամբ սահմանված կարգով: Վարչությունում քաղաքացիների ամենօրյա ընդունելության ժամանակ տրամադրվում են խորհրդատվություն, պարզաբանումներ:

46) իրականացնում է օրենսդրությամբ սահմանված Վարչությանը վերապահված այլ գործառույթներ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

5.Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:

6.Վարչության պետը հիմնական հաշվետու մարզպետին:

7.Վարչությունը իր գործունեությունն իրականացնում է Մարզպետի կողմից հաստատված հաստիքացուցակով :

8. Վարչության պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

9.Վարչության պետը պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար:

10. Վարչության գործունեությունը համակարգում է Մարզպետը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ հսկողություն է իրականացնում մարզպետի Աշխատակազմի գլխավոր քարտուղարը

11. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքները և պարտականությունները, շփումները և հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագրով /աշխատատեղի նկարագրով/:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ